ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԷՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ԲԿԳԿ-11

«10» մարտի 2025 թ.

ք. Երևան

«ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիքս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գործադիր տնօրեն Ջանիկ Սևոյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համացանցային էջի ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն, ապա

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3. կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2. Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ, Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրող փաստաթուղթը (հավելված № 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված № 3):

3.3. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 730 000 (յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ ԱԱՀ-ն:

4.2. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.3. Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.4. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված № 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4.5. Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1. կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.3. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.10. Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.12. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.13. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14. Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի № 1, № 2, № 3 և № 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ՀՎՀՀ 02704199
ք.Երևան Օրբելի 22
ՀՀ ֆիննախ.գործառն.վարչ.
Հ/Հ 900011033124

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷԼԻՔՍ ՍՊԸ

ՀՎՀՀ 04235445
Ք. Արտաշատ, Մարքսի-7/ա
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570078901950200

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված № 1
« 10 » 03 2025 թ. կնքված
ԲԿԳԿ-11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավե-րով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափ-ման միա-վորը	Ընդ-հանուր գինը/ ՀՀ դրամ	Ընդհա նուր քանա կը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	72411300/3	Կայքի դիզայնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Մինչև կայքի նախագծումը, Պատվիրատուին է ներկայացվում կայքի նախատիպը: <u>Անհրաժեշտ է, որպեսզի կայքը</u> Ապահովի դիտարկիչների հետ համատեղելիություն և մատչելի ընթերցելիություն, ապահովի համարժեք դիտման հնարավորություն համակարգիչների վրա՝ ճանաչում ունեցող դիտարկման դիտարկիչներով, ադապտացված լինի շարժական սարքերի վրա արտացոլվելու համար, ունենա բջջային հեռախոսների համար տարբերակ, ունենա օգտագործողին հարմար (user-friendly) և պարզ միջերես (interface), պատշաճ գրաֆիկա, ունենա կոնտենտի, այդ թվում տեսանյութերի (youtube) տեղադրման հնարավորություն: <u>Կայքի</u> նավիգացիան և տեխնիկական պարամետրերը համապատասխանում են 2020թ. «Պետական կառավարման մարմինների պաշտոնական	դրամ	730 000	1	Օրբելի 22	20.12.2025թ.

		ինտերնետային կայքերի գնահատում. Պրոակտիվ հրապարակայնություն» զեկույցի համապատասխան բաժնով սահմանված չափանիշներին: բոլոր բաժինները արտացոլում են հստակ, պարզ և հնարավորինս կարճ հասցեներ՝ հասցեագրող վահանակի վրա: յուրաքանչյուր էջ ունենում է իր հստակ վերնագիրը (header) և ստորագիրը (footer), իսկ դրանց բովանդակությունը ամփոփ ներկայացված է լինում յուրաքանչյուր էջում: յուրաքանչյուր էջի անվանումը (header) մշակված և համադրելի լինի որոնման համակարգերի համար: լեզուները (հայերեն, ռուսերեն և անգլերեն) չլինեն միմյանցից անկախ և առկա լինի կայքի ցանկացած էջից լեզվական տարբերակի ընտրության միջոցով համապատասխան բաժին անցնելու հնարավորություն: Առկա կայքի ուսումնասիրության և ներկայացված կառուցվածքային առանձնահատկությամբ պայմանավորված Կայքի համար սահմանվել է ժամանակակից, պարզ լուծմամբ արտաքին էջեր, որոնք պետք է ունենան՝ **<u>Գլխավոր էջում</u>** • Գլխագիր (header), ըստ ընտրացանկի (Menu) • Սլայդի հնարավորություն (ֆոնային լուսանկար կամ տեսանյութ և կարճ տեղեկատվություն), • նրան հաջորդող Նորությունների և Հայտարարությունների մոդուլ, • մատուցվող ծառայություններ կամ գործառույթների մաս, • Վերջացող հատված (Footer), կոնտակտային տվյալներով **<u>Երկրորդական էջեր</u>** • Հայտարարությունների և Նորությունների բաժին, • Տեղեկատվական բաժին					

		• Հրապարակումներ • Մրցույթներ (անձնակազմի) (ֆայլային համակարգի սկզբունքով, pdf, doc) • Հաշվետվություններ (ըստ տարեթվերի ֆայլային համակարգով, pdf, doc) • **<u>Այլ</u>** • Օգտակար հղումներ, • Աշխատակազմ (համապատասխան մոդուլ, ըստ որի հնարավոր կլինի ցանկացած անձի կցել համապատասխան պաշտոն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, և այն կդասակարգվի ըստ պաշտոնի, հարկավոր է նաև որոշ պաշտոնների համար թողնել կենսագրություն տեղադրելու հնարավորություն), • Մեր մասին (համապատասխան էջի ձևավորմամբ և ֆոտոդարանի առկայությամբ) • <u>Օրենսդրություն</u> • <u>Հարցերի և պատասխանների բաժին</u> Ընդհանուր Menu-ն ունենա հետևյալ կառուցվածքը **Ծառայություններ** Բուհերում ուսման վճարի փոխհատուցում և կրթաթոշակի տրամադրում Աստիճանաշնորհման գործընթաց Գիտական դրամաշնորհներ Գիտական աջակցության ծրագրեր **Կոմիտե** **Մենք** Մեր մասին Նախագահ Կառուցվածք Կանոնադրություն Համագործակցություն **Հիմնարկներ** Բուհեր Գիտական կազմակերպություններ **Նորություններ**					

		Բոլոր նորությունները Պաշտոնական լուրեր Հայտարարություններ Մամուլը մեր մասին Տեսադարան **Անձնակազմ** Հաստիքացուցակ Թափուր պաշտոններ Պաշտոնի անձնագրեր Ժամկետային պայմանագրի հայտարարություններ Կադրերի ռեզերվ Թափուր պաշտոնների մրցույթներ Թեստերի նմուշներ Փորձագետ **Տեղեկատվական կենտրոն (մեծ menu)** **Ֆինանսական** Բյուջե Տարեկան հաշվետվություններ Գործուղումների հաշվետվություններ **Իրավական ակտեր** ՀՀ Օրենքներ ՀՀ Նախագահի հրամանագրեր ՀՀ Վարչապետի որոշումներ ՀՀ ԿԳՄՍՆ Նախարարի հրամաններ Կոմիտեի նախագահի հրամաններ Որոշումներ և կարգեր Միջազգային պայմանագրեր **Տեղեկատվության ազատություն** Տեղեկատվություն ստանալու հարցման կարգ Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձև Տեղեկությունների մատչելիություն և հրապարակայնության ապահովում Դիմում բողոքներ **Փաստաթղթեր** Հայտերի ձևեր Պայմանագրերի ձևեր					

		Համաձայնագրերի ձևեր Հաշվետվությունների ձևեր Ձևաթղթեր **Այլ** Հաճախ տրվող հարցեր Գնումների գործընթաց Գիտական գործունեություն Օգտակար հղումներ Ուսանողի անկյուն Կոմիտեի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաներ **Մրցույթներ** Բոլոր մրցույթները Ընթացիկ մրցույթներ Ամփոփված մրցույթներ **Կապ** Հետադարձ կապի տվյալներ Դիմում Կոմիտեին Քաղաքացիների ընդունելություն Նոր կայքը ունենում է հնարավորություն ապագա զարգացումների համար: Անհրաժեշտ է պատրաստել «Հիմնարկներ» գործիքակազմ, որի միջոցով հնարավոր կլինի կազմել Բուհերի և Գիտական կազմակերպությունների ցանկը, ըստ Անվանման և տվյալների (Հեռ., Հասցե, էլ-փոստ, Կայք և այն): Անհրաժեշտ է պատրաստել «Մրցույթներ» գործիքակազմ, որի միջոցով հնարավոր կլինի տեսնել «Բոլոր մրցույթները», «Ընթացիկ մրցույթներ» և «Ամփոփված մրցույթներ»-ը, ընդորում անհրաժեշտ է, որ «Մրցույթներ» գործիքակազմը թույլ տա ունենալ Մրցույթի կարգավիճակներ՝ «Հայտերի ընդունման փուլում է», «Ամփոփման փուլում է» և «Արդյունքները հայտնի են»: Կարգավիճակներից կախված պետք է «Մրցույթները» ավտոմատացված մի կարգավիճակից անցնեն մյուսը, երբ կիրապարակվեն, կկցվեն նյութեր,					

		կկցվեն արդյունքներ և այլն: Մրցույթներ գործիքակազմը պետք է պարունակի «Որոնման» դաշտ, որի միջոցով որոնում պետք է կատարել միայն «Մրցույթներ»-ի համապատասխան դաշտերում, նույնիսկ Փաստաթղթերի անվանումներում, Արդյունքների դաշտերում: Արդյունքները պետք է կցվեն որպես «Աղյուսակներ», որոնց բովանդակության որոնման հնարավորությունը պետք է հասանելի լինի «Մրցույթներ»-ի որոնման դաշտի միջոցով: Անհրաժեշտ է նաև ապահովել Կոմիտեի հին կայքից նյութերի ավտոմատացված միգրացիան դեպի նոր կայք: Կայքի հետ տրամադրվում է անհատական ճկուն ադմինիստրավորման վահանակ և տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ ոլորտում նվազագույն հմտություններով անձանց կայքի տեղեկատվական բովանդակությունը խմբագրելու հնարավորություն, ընդ որում Կայքի տեղեկատվական բովանդակությունը խմբագրումը կատարվում է Պատվիրատուի համար մշակված Բովանդակության կառավարման համակարգի (CMS)-ի միջոցով: Admin-ի մուտքը ապահովել 2-փուլանոց նույնականացման միջոցով:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ՀՎՀՀ 02704199
ք.Երևան Օրբելի 22
ՀՀ ֆիննախ.գործառն.վարչ.
Հ/Հ 900011033124

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷԼԻՔՍ ՍՊԸ

ՀՎՀՀ 04235445
Ք. Արտաշատ, Մարքսի-7/ա
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570078901950200

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված № 2
«10».03.2025 թ. Կնքված
ԲԿԳԿ-11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հրավե-րով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
1	72411300/3	Համացանցային էջի ձևավորման ծառայություններ	-	-	-	730000	730000	730000	730000	730000	730000	730000	730000	730000	**730000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ՀՎՀՀ 02704199
ք.Երևան Օրբելի 22
ՀՀ ֆիննախ.գործառն.վարչ.
Հ/Հ 900011033124

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷԼԻՔՍ ՍՊԸ

ՀՎՀՀ 04235445
Ք. Արտաշատ, Մարքսի-7/ա
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570078901950200

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված № 3
« » 2025 թ. կնքված
ԲԿԳԿ-11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«» « » 2025թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2025 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2025թ. դուրս գրված № ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված № 3.1
« » 2025 թ. կնքված
ԲԿԳԿ-11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստի ամրագրման վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի

անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված № _____
պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն